ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

223 - Ա

21 նոյեմբերի 2025թ.

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2 մարտի 2023 թվականի «Պետական կամ համայնքային կազմակերպությունների արտադպրոցական ծրագրեր իրականացնող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրավճարի տրամադրման կարգը սահմանելու մասին» N 269-Ն որոշման հավելվածի 4-րդ և 18-րդ կետերը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 29.08.2025թ. «Ուսուցիչների 2025 թվականի կամավոր ատեստավորման ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 2035 Ա/2 հրամանի դրույթները՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել 2025թ. դեկտեմբերի 6-ին և 7-ին կազմակերպվող պետական կամ համայնքային կազմակերպությունների արտադպրոցական ծրագրեր իրականացնող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման կենտրոնները՝ Երևանի թիվ 20 հիմնական դպրոց և Երևանի թիվ 135 հիմնական դպրոց:
2. 2025թ. դեկտեմբերի 6-ին Երևանի թիվ 20 հիմնական դպրոցում կազմակերպել «Նվագակցություն /դաշնամուր/», «Փայտյա փողային գործիքներ», «Պղնձյա փողային գործիքներ» և Երևանի թիվ 135 հիմնական դպրոցում՝ «Պարարվեստ» առարկաների առեստավորումը:
3. 2025թ. դեկտեմբերի 7-ին Երևանի թիվ 20 հիմնական դպրոցում կազմակերպել «Թատերարվեստ», «Շախմատ», «Գեղարվեստական մարմնամարզություն», «Սպորտային մարմնամարզություն», «Սպորտային ակրոբատիկա և ցատկացանց», «Լող» առարկաների ատեստավորումը:

Տնօրեն Ա. Փաշայան